Ինստիտուտների դերն ու նշանակությունը

Միքայելյան Թ. Վ.
Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան, ասպիրանտ
(Երևան, Հայաստան)
taguhi.mikayeyan@yandex.com

Վճռորոշ բառեր՝ ինստիտուցիոնալ համակրգ, ոչ ֆորմալ ինստիտուտ, ֆորմալ ինստիտուտ, թվային ինստիտուտ

Роль и значение институтов

Микаелян Т. В.
Армянский Государственный экономический Университет (Ереван, Армения)
taguhi.mikayelyan@yandex.com

Резюме: В современную эпоху институты и институциональная система стали важными и определяющими для экономических показателей. Важно изучать интитуты и раскрывать их особенности. В данной статье рассматриваетсятрансформация поколений институтов. О средством трансформаций являются развитие вариантов передачи информации. Представлены особенности нового поколения институтов, цифровых институтов.
Ключевие слова: Институциональная система, неформальный институт, формальный институт, цифровой институт

The role and importance of institutions

Mikayelyan T. V.
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
taguhi.mikayelyan@yandex.com

Abstract: In the modern era, institutions and the institutional system have become significant and decisive for economic performance. It is important to study institutions and discover their peculiarities. The article examines the generational transformation of institutions, as well as reveals the means of generational transformation, that is the development of information transfer options. The article introduces the features of the new generation digital institutions.
Keywords: Institutional system, non-formal intitute, formal institute, digital intitute

Արդի ժամանակաշրջանում ինստիտուտները և ինստիտուցիոնալ համակարգի կայացվածությունը դարձել են նշանակալի և որոշիչ պետությունների տնտեսական ցուցանիշների համար: Heritage Foundation [**1**], The Freedom House [**2**] անկախ կազմակերպությունները, The world economic forum [**3**]-ը ներկայացնում են ամբողջ աշխարհում պետությունների գրանցած ամենամյա ինստիտուցիոնալ առաջընթացները և հետընթացները: The Heritage Foundation անկախ հետազոտական կազմակերպությունը երկրների ինստիտուցիոնալ միջավայրը գնահատում է «Օրենքի գերակայություն» (որի մեջ ներառվում են «Սեփականության իրավունքներ», «Արդարադատության համակարգի արդյունավետություն», «Կառավարության ներգրավածություն» ենթացուցանիշները), «Կարգավորման արդյունավետություն» (որի մեջ ներառվում են «Գործարար միջավայրի անկախություն», «Աշխատաշուկայի անկախություն» և «Դրամական հատվածի անկախություն» ենթացուցանիշները), «Կառավարության չափ» (որի մեջ ներառվում են «Հարկային բեռ», «Կառավարության ծախսեր», «Հարկային միջավայրի առողջություն» ենթացուցանիշները), «Բաց շուկաներ» (որի մեջ ներառվում են «Առևտրի ազատություն», «Ներդրումների ազատություն» և «Ֆինանսական ազատություն» ենթացուցանիշները) ցուցանիշների միջոցով[4]: The Freedom House անկախ վերլուծական կազմակերպությունը յուրաքանչյուր տարի պետություններին դասակարգում է ըստ ազատության աստիճանի «Քաղաքական իրավունքներ» (որի մեջ ներառվում են «Ընտրական գործընթաց», «Քաղաքական բազմակարծություն», «Կառավարության գործառույթ» ենթացուցանիշները) և «Քաղաքացիական ազատություն»

(որի մեջ ներառվում են «Արտահայտվելու և Հավատքի ազատություն», «Ասոսիացիաների և կազմակերպությունների ազատություն», «Օրենքի գերակայություն», «Անձնական ազատություն և իրավունքներ» ենթացուցանիշները) ցուցանիշների միջոցով [**5**]: Համաշխարհային մրցունակության ամենամյա զեկույցը [**6**], որը ներկայացվում է The world economic forum [6]-ի կողմից, հիմված է 12 հենասյուն—ցուցանիշների վրա, որոնցից առաջինը «Ինստիտուտներ» ցուցանիշն է: Այս ցուցանիշի մեջ ներառվում է «Անվտանգություն», «Սոցիալական կապիտալ», «Ստուգումներ և հաշվեկշիռ», «Հանրային ոլորտի ներկայացում», «Թափանցիկություն», «Սեփականության իրավունքներ», «Կորպորատիվ կառավարում», «Կառավարության ապագա կողմնորոշում» ցուցանիշները: Գերակշիռ պետությունների դեպքում ինստիտուտների ցուցանիշների և տնտեսական ցուցանիշների միջև կապը ուղիղ համեմատական են: Այսինքն էքստրաակտիվ ինստիտուտներ ունեցող երկրներում գրանցվում են ցածր տնտեսական ցուցանիշներ, ինկլյուզիվ ինստիտուտներ ունեցող պետություններում գրանցվում են առավել բարձր տնտեսական ցուցանիշներ: Ըստ Freedom House-ի ազատ պետություններ են համարվում ԱՄՆ-ն (86 միավոր), Ճապոնիան (96 միավոր), Գերմանիան (94 միավոր), Մեծ Բրիտանիան (94 միավոր), որոնք գլխավորում են ՀՆԱ ցուցանիշով առաջին հնգյակը: Բացառությունների շարքում են Ասիական վագրերը, Չինաստանը, որտեղ անկախ քաղաքական ռեժիմից տնտեսական ինստիտուտների ազատականությունը պահպանվում է, ինչի արդյունքում էլ բարձր ցուցանիշներ են գրանցվում տնտեսական հատվածում: Սինգապուրը մենք կդասենք բացառություն երկրների շարքին: Այն ըստ 2019 թվականի տվյալների գտնվում է 51-րդ տեղում և որակվում է որպես «մասամբ ազատ» պետություն: Ազատության ցուցանիշով, քաղաքական իրավունք և քաղաքացիական ազատություն դասակարգիչներում Սինգապուրը «4» միավոր ունի: Ընտրական գործընթացը պետությունում հնարավոր «12»-ից գնահատվում է նվազագույն միավորով՝ «4»: Ներկայիս օրենսդիր մարմնի ընտրությունները ևս արդար չեն համարվում և դասակարգվում են հնարավոր «4»-միավորից «2» միավոր: Քաղաքական բազմակարծության և մասնակցության դասիչով Սինգապուրը գնահատվում է հնարավոր «16»-ից «8» միավորով: Այստեղ իշխող քաղաքական կուսակցությունը դոմինանտ դեր է կատարում, ի տարբերություն քաղաքական ընդդիմության՝ ունի ֆինանսական մեծ միջոցներ, ստանում է լրատվամիջոցների աջակցությունը քաղաքական ընտրարշավների ժամանակ, մեծ կապ կա գործարար և պետական էլիտայի միջև, որը հանգեցնում է օլիգարխիկ միտումների: Կառավարության գործողությունները գնահատվում են հնարավոր «12» միավորից «7» միավոր: Հիմնականում նշվում է, որ Սինգապուրում բարձր մակարդակի վրա է պայքարը կոռուպցիայի դեմ, սակայն տեղի կորպորատիվ տնտեսական համակարգի արդյունքում պետական և մասնավոր հատվածի միջև կապը բավականին սերտ է՝ շատ պետական պաշտոնյաներ աշխատում են մասնավոր ընկերությունների խորհուրդներում: Դատարանների անկախությունը հնարավոր «4» միավորից գնահատվել է նվազագույն «1» միավոր: Կառավարությունը անմիջական ազդեցություն ունի դատական որոշումների վրա: Սակայն կարևոր առանձնահակությունն այն է, որ գործարար հատվածին առընչվող գործերում պահպանվում է անաչառությունը, քանի որ երկրի ներդրումային միջավայրը անմիջականերոն կապված է առողջ դատական համակարգի հետ: Մասնավոր հատվածի նկատմամբ առողջ դատաիրավական համակարգի և ինկլյուզիվ ինստիտուտների կիրառման արդյունքում 2019 թվականի տվյալներով Սինգապուրում 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 63.987 ԱՄՆ դոլար: Բացառությունների շարքում է նաև Չինաստանը, որը Համախառն Ներքին Արդյունքի ցուցանշով աշխարհում 2019 թվականին եղել է երկրորդ տեղում [**7**] ,սակայն Freedom House-ի տվյալներով նա հանդիսանում է «ոչ ազատ» պետություն: Այս դեպքում պետությունները իրականացնում են ինստիտուցիոնալ միջավայրի դիվերսիֆիկացման ռազմավարություն՝ էքստրաակտիվ ինստիտուտները համադրում են ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտներին:

Ինստիտուտ կատեգիորայի համար հանդիպում ենք բազմաթիվ սահմանումների

տարբեր դիսցիպլինաների շրջանակներում: Ի սկզբանե այն դիտարկվել է սոցիոլոգների կողմից: Սոցիոլոգիայում ինստիտուտ հասկացությունը սահմանվում է, որպես «կանոնների և ստանդարտացված վարքագծի մոդելների սահմանված կարգ» [**8**]: Հասկացությունը շատ դեպքերում գործածվում է երկիմաստ: Մեկ այլ սահմանմամբ՝ «ինստիտուտները պատմության ընթացքում ձևավորված և հաստատված, կայուն և ինքնավերարտադրվող սոցիալական փոխհարաբերությունների տեսակներ են, որոնք կոչված են բավարարելու այս կամ այն տեսակի մարդկային պահանջմունքները» կամ «կանոնավոր կարգավիճակների և դերերի համակարգ, որը ապահովում է մարդկանց պահանջմունքների բավարարման ընդունված գործընթացի անընդհատությունը և ինքնավերարտադրումը» [**9**]:

Տ. Վեբլենը ինստիտուտը սահմանում է «մտքի կարծրատիպ», «ազդակներին արձագանքելու սովորութային տարբերակներ», «հասարակության և անհատի հարաբերությունների և նրանց կողմից իրականացվող առանձին գործառույթների վերաբերյալ ընդհանրացված մտածելակերպ» [**10**]: Ա. Առզանը ինստիտուտը սահմանում է, որպես «որոշակի կանոններ», «գաղափար», որոնք հատուկ են մարդկանց խմբերին [**11**]: Նա ինստիտուտի գործածության մի շարք տարբերակներ է դիտարկում:

Աճեմօղլին և Ռոբինսոնը «Ինչու՞ են ազգերը կործանվում» աշխատանքում ներկայացնում են այն տեսությունները, որոնք նախկինում համարվել են երկրների զարգացման տարբերությունների պատճառ: Դրանք են եղել աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները, ղեկավարների տգիտությունը, մշակույթի ազդեցությունը [**12**]: 17-րդ դարում Շարլ Մոնտեսքյոն ներկայացրեց երկրների զարգացվածության և աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների կապը, որի գաղափարները հետագայում զարգացրեց տնտեսագետ Ջ. Սաքսը: Տեսությունը, որ շոգ կլիման հանգեցնում են աղքատության հերքեցին Սինգապուրը, Մալազիան իրենց օրինակներով, երկու Նոգալես քաղաքները, որոնք գտնվում են տարբեր պետությունների սահմաններում: ԱՄՆ-ի Արիզոնա նահանգի տարածքում գտնվող Նոգալես քաղաքը և Մեքսիկայի տարածքում գտնվող Նոգալես քաղաքը գտնվում են նույն աշխարհագրական դիրքում, սակայն առաջինում գործում են ինկլյուզիվ ինստիտուտներ և բարեկեցիկ կյանք, իսկ երկրորդում՝ գերիշխում են մեքսիկական ոչ ֆորմալ էքստրաակտիվ ինստիտուտները և կյանքի ցածր մակարդակը: Նույն տրամաբանությամբ չի հիմնավորվում Հարավային և Հյուսիսային Կորեաների, Արևմտյան և Արևելյան Գերմանիաների տնտեսական ցուցանիշները, սակայն նրանք գտնվում են նույն աշխարհագրական դիրքերում:

Տնտեսության զարգացման և մշակույթի կապի տեսության ջատագովներից էր Մաքս Վեբերը: Թերևս այս տեսությունը ևս հերքվում է, սակայն մշակույթը հանդիսանում է ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ համակարգը: Ուստի կարելի է, ասել, որ այս տեսությունը տնտեսության զարգացման և ինստիտուտների կապը ներկայացնող տեսության նախահիմքն է:

Համաձայն տգիտության տեսության, երկրները աղքատ են դառնում ղեկավարների տգիտության պատճառով: Սակայն Հարավային և Հյուսիսային Կորեաների զարգացման տարբերությունների պատճառը իրենց ղեկավարների կրթվածության պատճառը չէ, խնդիրը առավել խորքային է՝ պատճառը տարբեր ինստիտուցիոնալ սահմանափակումներն են:

Աճեմօղլին և Ռոբինսոնը զարգացրեցին էքստրաակտիվ և ինկլուզիվ ինստիտուտների տեսությունը: Ինկլյուզիվ ինստիտուտները գործում են ի օգուտ ամբողջ հասարակության շահի: Ինկլյուզիվ ինստիտուտների մաս են կազմում մասնավոր սեփականությունը պաշտպանող իրավունքները, անկողմնակալ դատաիրավական համակարգը, բոլոր քաղաքացիների համար հավասար հնարավորությունները, շուկա մուտք գործելու ազատ հնարավորություն և այլն: Էքստրաակտիվ ինստիտուտների դեպքում հասարակության մեծ հատվածի կողմից ստեղծված արդյունքը յուրացվում է մի ստվար զանգվածի կողմից: Էքստրաակտիվ ինստիտուտների դեպքում գերակայում են մասնավոր սեփականության իրավունքների խախտումը, անաչառ դատաիրավական համակարգը, կոռուպցիան, չկայացած դատաիրավական համակարգը: Իսկ երկրում գործող ինստիտուտների տեսակը

կախված է ղեկավարների կողմից հետապնդվող տնտեսական շահից:

Պետք է նշել, որ մինչ ինստիտուցիոնալիստներն էլ գրեթե բոլոր տնտեսագետները կարևորել են տնտեսական անկախությունն ու ազատականությունը: Ա. Սմիթը խոսել է տնտեսական ազատության և շուկայի անտեսանելի ձեռքի մասին [**13**], Ա. Օնորեն 1961 թվականին ստեղծում է իրավունքների փունջը (տիրապետման, օգտագործման, կառավարման, եկամտի ստացման, օտարման, անվըտանգության, ժառանգությամբ փոխանցման, անժամկետ օգտագործման, վնասակար օգտագործման արգելման, պատասխանատվության համար գանձվող գումարի և մնացորդային բնույթի իրավունքները): Ներկայացվել է մրցակցության տեսակները և տեսական առավելությունը տրվել է կատարյալ մրցակցությանը, շուկա մուտք գործելու ազատությանն ու տնտեսավարողների իրավահավասարությանը: Շուկայական տնտեսության պայմաններում արդար բաշխման շրջանակներում քննարկվել են Պարետո արդյունավետ, էգալիտարիստական և ուտալիտարիստական բաշխման կոնցեպցիաները: Տնտեսական ազատության, տնտեսավարողների իրավական հավասարության, արդար բաշխման հիմնախնդիրները միշտ առաջնային են եղել բոլոր տնտեսագիտական դպրոցների համար: Թերևս Հայեկը նշել է, որ էվոլյուցիան չի կարող լինել արդար [**14**]:

Ամբողջացնելով մեր դիտարկումները մի քանի գաղափարներ առանձնացնենք՝

1. Ինստիտուտ հասկացության դերի և նշանակության առավել հստակեցման համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրա ծագումնաբանությունը: Խ. Գրետխենը և Ս. Լեվիտսկին ոչ ֆորմալ ինստիտուտների ձևավորման մի քանի բնույթ են ներկայացնում: Գտնում են, որ ոչ ֆորմալ ինստիտուտները կարող են հանդիսանալ վերնախավի մտադրության արդյունք, ինչպես մեքսիկական «dedadzo» ոչ ֆորմալ ինստիտուտը: Մեքսիկայում երկարատև ժամանակ նախագահները չեն ընտրվել ըստ ընտրական կարգի, այլ գործող նախագահը առաջադրել է թեկնածուների և ընտրել իրեն իրավահաջորդողին: Երկրորդ տարբերակում՝ ոչ ֆորմալ ինստիտուտները, ինչպիսիք են կոռուպցիան և այլն, ծագում են ապակենտրոնացված գործընթացների արդյունքում [15]: Ջ. Նայթը ոչ ֆորմալ ինստիտուտները համարում է կանոնների էություն, որոնց իրացումը չի պարտադրվում երրորդ կողմի կողմից, այն կամ ինքնաիրացվում է կամ պարտադրվում է ոչ ֆորմալ տարբերակով: Դրանք իրենց մեջ ներառում են կոնվենցիաները, նորմերը և կանոնները, որոնք բխում են մշակույթից և կրոնից [**16**]: Կ. Վիլյամսոնը նշում է, որ ոչ ֆորմալ ինստիտուտները տարբերակվում են կարգերից, համոզմունքներից, ավանդույթներից, նորմերից և սովորույթներից մինչև մասնավոր դատական համակարգերի [**17**]: Ս. Պայովիչը ոչ ֆորմալ ինստիտուտների շարքին է դասակարգում ավանդույթները, սովորույթները, բարոյական նորմերը, կրոնական հավատալիքները և բոլոր վարքային նորմերը [**18**]: Վերոգրյալ գաղափարները կարևոր են, սակայն ինստիտուտների ծագման էությունը հստակ չեն բացահայտում: Ինստիտուտները ստեղծվել են մարդու կողմից ցեղախմբում աշխատանքի բաժանման և հասարակական կարգի պահպանման համար: Օրինակ ավանդույթ հասկացությունը լատիներենից թարգմանվում է փոխանցել, տալ, ուսուցանել, վաղ ժամանակներից հաստատված և պահպանված կարծիք, սովորույթ [**19**]: Գրերի բացակայության ժամանակ որպես ոչ ֆորմալ ինստիտուտների գործադրման միջոց է եղել բանավոր խոսքն ու պարտադրանքը: Չինաստանում մինչև հիմա էլ առավել բարձր են արժեքավորվում և գործում բարոյական նորմերի, վարքականոնների մասին պատկերացումները: Գրերի ստեղծմամբ ինստիտուտ հասկացությունը ևս էվոլյուցիայի է ենթարկվել և ձևավորվել են գրավոր իրավունքները, կարգուկանոնը հստակեցնող փաստաթղթերը: Արևելյան մշակույթին հատուկ են հայրիշխանությունը, կոլեկտիվիզմը, համայնքայնությունը, դավանապաշտությունը, ավանդապաշտությունը, բազմապիսի սոցիալական կարգերը [**20**]: Ամենավաղ պետական

քաղաքակրթությունները զարգացել են հենց Հին արևելքում՝ Հին Եգիպտոսում, Հին Հնդկաստանում, Հին Չինաստանում: Արևելյան բռնատիրական կարգին հատուկ են եղել միապետի իշխանական կարգը, որը եղել է միակ օրենսդիր և դատական մարմինը: Կրոնական հավատալիքները և բարոյական նորմերը հանդիսացել են հասարակության կառավարման միջոցներ:

Հին արևելքի իրավունքը հետևյալ հիմքերն է ունեցել [**21**].

- Իրավունքի հիմնական աղբյուրն են հանդիսացել սովորույթները, որոնք ամբողջ համայնքի կողմից են ստեղծվել և երկար ժամանակ գրի չեն առնվել, եղել են բանավոր և մտապահվել են ցեղակիցների կողմից: Սովորույթները պահպանվել են որպես իրավունքի հիմնական աղբյուր նաև այն ժամանակ, երբ հայտնվել են գրավոր իրավական փաստաթղթերը, բրահմանյան գրառումները:
- Իրավունքը կրել է կրոնի խիստ ազդեցությունը: Եգիպտական, վավիլոնյան, չինական իրավունքը որոշակի փոխադարձ կախվածության մեջ է եղել այն ժամանակի կրոնական հավատալիքների և մշակույթի հետ: Իրավախախտումը դիտարկվել է որպես միաժամանակյա կրոնական և բարոյական նորմերի խախտում:

Իհարկե գրաճանաչությունը և իրավունքի ֆորմալացումը դժվար են կայացել, քանի որ ղեկավարների համար դա շահավետ չէր կարող լինել: Բանավոր, ոչ ֆորմալ ինստիտուտները առավել ճկուն կարող է օգտագործել միապետը, իսկ հստակ գրի առնված օրենքները այդքան ճկուն չեն և չեն կարող առնչվել միապետին և նրա իշխանությանը: Պատմությունից հայտնի է, որ ստրուկներին, ցածր դասակարգին արգելել են գրաճանաչ լինել: Ամերիկայի Միացյալ Նահանգներում դեռ 1800-ական թվականներին գրեթե բոլոր նահանգներում գործել է «Ստրուկների կրթության արգելման» օրենքը: Գրաճանաչության զարգացումն ու ֆորմալ ինստիտուտների հստակ գործարկումը պահանջել են հասարակության մեծ կամքի ներդրում: Ներկայումս ֆորմալ իրավական դաշտում մարդիկ իրենց իրավունքը հստակ չեն կարողանում իրացնել դրանց չիմացության և համապատասխան կրթության բացակայության պատճառով: Բանկային ոլորտում առավել վառ օրինակներից է ժամկետից շուտ վարկը մարելու վարկառուի իրավունքը, որը բավականին ժամանակ չարաշահվում էր ՀՀ առևտրային բանկերի կողմից: Նման օրինակները բազմաթիվ են և բխում են քաղաքացիների ֆորմալ ինստիտուտների վերաբերյալ թերի տեղեկատվությունից: Թվային տեխնոլոգիաների զարգացմամբ ձևավորվել են ինստիտուտների հաջորդ տեսակը՝ թվային ինստիտուտները՝ խելացի պայմանագրերի և թվային աշխարհում իրավական նորմերի տեսքով: Երրորդ սերնդի ինստիտուտներից սպասումները առավել մեծ են հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ քիչ են արմատավորված ֆորմալ ինստիտուտները, քանի որ այդտեղ կխուսափեն «ինստիտուցիոնալ ծուղակի» [**22**] ֆենոմենից: Պատահական չէ, որ հանրահայտ «Բլոկչեյն համաժողովը» 2016 թվականին կայացավ Մարակեշում: Համաժողովի մասնակիցները Ռիչարդ Բրանսոնի գլխավորությամբ, առաջարկել են օգտագործել բլոկչեյն տեխնոլոգիաները Աֆրիկայի տնտեսության զարգացման համար: Միլիարդատեր Ռիչարդ Բրանսոնը համաժողովներից մեկում ասել է, որ բլոկչեյնը այն տեխնոլոգիան է, որը տնտեսական հեղափոխություն կիրականացնի զարգացող երկրներում [**23**]: Համաժողովի մասնակիցները նշել են, որ եկել են Աֆրիկա, քանի որ այդտեղ կա հնարավորություն, այդտեղ բիզնեսի աճի համար տարածք կա [**24**]: Աֆրիկայի անձեռակերտությունը ֆորմալ ինստիտուտների կողմից առավել դյուրին կլինի խելացի ինստիտուտների ներդրման համար, քանի որ երկու սերնդի ինստիտուտների միջև մրցապայքար չի լինի: Իսկ զարգացած երկրներում կամ զարգացող երկրներում, որտեղ քաղաքական ինստիտուտների արմատները բավականին խորն են մրցապայքարը բավականին սուր կլինի և սերնդափոխությունը առավել դանդաղ կընթանա: Հարավային Աֆրիկայի Հանրապետությունը առաջին երկրներից է, որը համաձայնվել է, իր պետությունում ներդնել բլոկչեյն տեխնոլոգիայի վրա հիմնված կադաստրային ծառայությունները՝ արդյունքում կբացառվի անօրինական ճանապարհներով

տարածքների սեփականաշնորհումը, որը երկար տարիներ գործում է այդ այդտեղ: Ստացվում է, որ Հարավային Աֆրիկայի Հանրապետությունում հնարավոր չի եղել օրինականացնել հողի սեփականաշնորհման գործընթացը ֆորմալ ինստիտուտների շրջանակներում, քանի որ քաղաքական ինստիտուտները և կազմակերպությունները չեն կարողանում հաստատել օրինականության կարգեր: Նշանակում է, որ երկրորդ սերնդի ինստիտուտները հարմար չեն, լիարժեքորեն ստեղծված չեն նման քաղաքակրթություններին պատկանող երկրների համար: Այդ երկրներին անհրաժեշտ է մարդկային գործոնից ձերբազատված ինստիտուտներ, որոնք են երրորդ սենդի ինստիտուտները: Նման երկրներին անհրաժեշտ են ոչ թե ներկա սերնդի ինստիտուտները, այլև լավագույն ապագայի ինստիտուտները, որոնք մենք կանվանենք «the future best» [**25**] ինստիտուտներ:

2. Ինստիտուտը մարդածին հասկացություն է: Պայմանավորված այդ հանգամանքով հաճախ ինստիտուտի էքստրակտիվությունը կամ ինկլյուզիվությունը խիստ կապված է տնտեսական շահից, որը հետապնդվում է ինստիտուտը ներդրողների կողմից: Ստրուկների գրաճանաչությանը խոչընդոտող օրենքը բխել է ԱՄՆ կառավարության շահից: Ինչու՞ են առաջանում «ինստիտուցիոնալ ծուղակները», ինչու՞ են ներդրվում հասարակության ստվար զանգածի շահին միտված ֆորմալ ինստիտուտները: Պատճառը ղեկավարող վերնախավի մասնավոր շահի սպասարկումն է: Ինկլյուզիվ ինստիտուտի անգործությունն ու անտեսումը ևս պայմանավորված է այդ հիմնախնդրով: Նման գործընթաց է ընթանում հիմա ֆորմալ և թվային ինսիտուտների միջև: Թվային ինստիտուտները իրենց գործունեությամբ նվազեցնում են մարդկային գործոնը և բավականին կազմակերպությունների կարիք այլևս չի զգացվի: Նոտարական գրասենյակները, առևտրային և կենտրոնական բանկերը, կադաստրային ծառայությունները և մի շարք կազմակերպություններ թվային ինստիտուտների դարաշրջանում սպառվելու են: Ստացվում է, որ նման կազմակերպություններն պայքարելու են ֆորմալ ինստիտուտների պահպանման և թվային ինստիտուտների չգործարկման համար, որը ևս մի ստվար հատվածի մասնավոր շահից է բխում:

3. Ինստիտուտները էվոլյուցիայի են ենթարկում տեղեկատվության փոխանակման տարբերակների փոխակերպման հետ միասին: Տեղեկատվության փոխանցման բանավոր տարբերակից գրավոր տարբերակին անցման արդյունքում ձևավորվել են ֆորմալ, փաստաթղթային ինստիտուտները: Տեղեկատվության փոխանցման գրավոր տարբերակից թվային տարբերակին անցման արդյունքում ստեղծվել են խելացի-թվային ինստիտուտները: Ինստիտուտների էվոլյուցիոն հաջորդ մակարդակը կլինի տեղեկատվության փոխանցման այլ տարբերակի ծագման արդյունքում:

4. Երկրի ինստիտուտների որակի և տնտեսական ցուցանիշների միջև կապը ուղիղ համեմատական է: Ժամանակի ընթացքում այս կապը ձեռք է բերում մուլտիպլիկատոր-աքսելերատորի էֆֆեկտ: Երկրի բարձր տնտեսական ցուցանիշները նպաստում են ինստիտուտների որակի բարելավմանը, իսկ ինստիտուտների որակի բարելավումը նպաստում է տնտեսական ցուցանիշների էլ ավելի բարձրացմանը: Օրինակը դիտարկենք Հարաֆային Աֆրիկայի պետության, Նիգերիայի, Քենիայի և մյուս աֆրիկյան երկրների համար: Ավտոմեքենաների տրանսպորտի նիգերական միությունը մի շարք մասնավոր անհատների հետ գործարկել են տրանսպորտային համակարգ, որը հիմնված է բլոկչեյն տեխնոլոգիայի վրա: Այդ ծրագիրը կբարձրացնի ճամփորդողների անվտանգությունն, հաշվառումն ու ապահովագրությունը: Նիգերիայի ներկայացուցիչների պալատի անդամ Սոլոմոն Ադաելուն նշել է, որ Աֆրիկան չի եղել առաջին, երկրորդ, և երրորդ արդյունաբերական հեղաշրջման մաս, սակայն չորրորդ արդյունաբերական հեղաշրջումը անվրեպ չի անցնելու Աֆրիկայի կողքով: Այդ պատճառով աֆրիկյան պետությունները շահագրգռված

են բլոկչեյն տեխնոլոգիաների ներդրման համար: Բլոկչեյն տեխնոլոգիայի մյուս նորամուծություններից են էլեկտրոնային ընտրությունները: Առաջին էլեկտրոնային ընտրությունները բլոկչեյն տեխնոլոգիայի հիման վրա ևս իրականացվել են Աֆրիկայում՝ Սյերրա-Լեոնե պետությունում [**26**], իսկ տնտեսական բարձր ցուցանիշներ ունեցող գերակշիռ պետություններում այդ մասին անգամ խոսք չի գնում: Արդյունքում՝ Աֆրիկայում տնտեսական թռիչք է սպասվում, ինչպես ժամանակին Չինաստանում եղավ: Չինաստանի տնտեսական թռիչքը սինգապուրյան ինկլյուզիվ ինստիտուտների ներկրման արդյունքն էր: Տնտեսական թռիչքն էլ իր հերթին Չինաստանին տանում է ինստիտուցիոնալ համակարգի բարելավմանն ու ինկլյուզիվությանը:

5. Դասական տնտեսագիտական դասագրքերում շուկայի ձևավորման բազում նախադրյալներից է տնտեսական սուբյեկտների հարաբերական ազատությունն ու անկախությունը, տնտեսական ազատությունը պաշտպանող օրենսդրությունը և իրավական դաշտը [**27**]: Ինստիտուտների և շուկայի, տնտեսական հարաբերությունների միջև աղերսը բացարձակ հստակ է: Պրոֆեսոր Գ. Ե. Կիրակոսյանի և պրոֆեսոր Ի. Ե. Խլղաթյանի խմբագրությամբ «Տնտեսագիտության տեսություն» ուսումնական ձեռնարկում շուկան սահմանվում է, որպես տնտեսական և իրավական նորմերով գործող համակարգ, որն ունի որոշակի գործողության սկզբունքներ:

Շուկայի ձևավորման նախադրյալներն են հանդիսանում [**28**].

- աշխատանքի հասարակական բաժանումը, սեփականության բազմաձևությունը,
- տնտեսական սուբյեկտների հարաբերական ազատությունը և ինքնուրույնությունը,
- ռեսուրսների ազատ փոխանակությունը, ռեսուրսների սահմանափակությունը, փողի ծագումը, գների զատականացումը,
- տնտեսական ազատությունը պաշտպանող օրենսդրությունը և իրավական դաշտը:

Ստացվում է շուկայի կայացման նախադրյալը համապատասխան ինստիտուտներն են, իսկ շուկայի ձախողումը արդեն ենթադրում է ինստիտուտների անկատարության մասին: Տնտեսագետները շուկայի բացասական կողմերն են համարում այն, որ հարաբերությունները խիստ նյութականացված են, բացակայում է սոցիալական արդար բաշխման սկզբունքը, չի հոգում հասարակական նշանակության բարիքների մասին, առաջացնում է բնապահպանական հիմնախնդիրներ և ստվերային շուկայի հիմնախնդիրը [**29**]: Նման իրավիճակների պատճառը թվային, ֆորմալ և ինչու չէ ոչ ֆորմալ ինստիտուտների՝ բարոյական նորմերի և վարքականոնների անկատարությունն են: Արդյունքում որքան հստակ և կայացած լինեն ինստիտուտները, այնքան արդյունավետ կլինի շուկայի աշխատանքը:

6. Երբեմն երկրները կարող են վարել դիվերսիֆիկացված ինստիտուցիոնալ ռազմավարություն՝ էքստրաակտիվ քաղաքական ինստիտուտները կարող են համադրել ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտների հետ և հակառակը՝ ինկլյուզիվ քաղաքական ինստիտուտները կարող են համադրվել էքստրաակտիվ ինստիտուտների հետ: Նման պետությունները կազմում են բացառությունների շարքը: Վառ օրինակ Սինգապուրը, որը վարելով էքստրաակտիվ ինստիտուտների ռազմավարություն քաղաքական շրջանակներում՝ մասնավոր հատվածում պահպանում է ինստիտուտների ինկլյուզիվությունը: Պետությունները զուգահեռաբար կիրառում են նաև մի քանի սերնդի ինստիտուտներ միաժամանակ: Չինաստանում ասույթ կա «Կարևոր է այն թե դու ում ես ճանաչում, այլ ոչ թե ինչ գիտես»: Այս ասույթը բացահայտում է չինական «գուանսի» ոչ ֆորմալ ինստիտուտը: Դա ոչ ֆորմալ հարաբերությունների տեսակ է, որը վստահություն է ձևավորում մարդկանց միջև: «Գուանսի»-ի միջոցով հնարավոր է լուծել բավական հարցեր առանց ֆորմալ ինստիտուտների միջամտության [**30**]: Այսինքն ինստիտուցիոնալ համակարգի հաջորդ առանձնահատկությունը նրա ճկունությունն է, որի միջոցով կախված նպատակահարմարությունից

կարող են գործածվել տարբեր սերնդի ինստիտուտներ:

Ամփոփելով մեր դատողությունները կարող ենք եզրահանգել, որ երկրի ինստիտուցիոնալ միջավայրը ու տնտեսությունը փոխկապակցված և փոխադարձաբար միմյանց վրա ազդող բարդ, հարաշարժ զարգացող համակարգ են ձևավորում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Տնտեսագիտության տեսություն ուսումնական ձեռնարկ, խմբ՝ տ.գ.դ., պրոֆ. Գ. Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ. Ի. Ե. Խլղաթյանը – Եր. Տնտեսագետ, 2009, էջ 139: [28]
2. Տնտեսագիտության տեսություն ուսումնական ձեռնարկ, խմբ՝ տ.գ.դ., պրոֆ. Գ. Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ. Ի. Ե. Խլղաթյանը – Եր. Տնտեսագետ, 2009, էջ 142: [29]
3. Տնտեսագիտության տեսություն ուսումնական ձեռնարկ, խմբ՝ տ.գ.դ., պրոֆ. Գ. Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ. Ի. Ե. Խլղաթյանը – Եր. Տնտեսագետ, 2009, էջ 164: [30]
4. Զարգացման ժամանակակից մարտահրավերներ: Գիտաժողովի նյութեր, I/ ՀՊՏՀ:-Եր.: Տնտեսագետ, 2015, էջ 104: [14]
5. Аузан А. А. Институциональная экономика для чайников. – М.: Фэшнпресс, 2011 с. 6. [12]
6. Веблен Т. Теория праздного класса. М.: Прогресс. 1984 с. 200.201. [11]
7. Большой толковый социолодический словарь. Том 1: Пер. Сангл. М.: Вече, АСТ, 2001.С. 248. [9]
8. Веселова Л. С. Роль неформальных отношений (гуаньси) с социальной жизни КНР после 1949 года: историография вопроса Санкт-Петербургский государственный университет, с. 112.
9. Гретхен Хелмке, Стивен Левитски Неформальные институты и сравнительная политика, 2007 г. [16]
10. Дарон Аджемоглу, Джеймс Робинсон, Почему одни страны богатые, а другие бедные. Москва, АСТ, г, 2016, с. 118-159. [13]
11. Дворецкий И. Х. Латинско-русский словарь. М., 1986. – С. 778. [20]
12. История государства и права зарубежных стран: учебник для бакалавров / М. Н. Прудников. – 6-е исд., перераб. и доп. – М.: Издательство Юрайт; ИД Юрайт, 2013. с. 38. [21, 22]
13. Общая социология: Учебное пособие / Под общ. Ред. Проф. А. Г. Энфендинова. М.: ИНФРА-М, 2000 с. 215,222. [10]
14. Полтерович В. М., Институцональные ловушки и экономические реформы, ЦЭМИ РАН и РЭШ, Москва, г. 1999 [23]
15. Knight J, Institutions ans Social Conflict. – Cambridge: Cambridge University Press , 1992. P. 171. [17]
16. Pejovich S. Introduction. –In: Pejovich S. ed. The Economics of Property Rights: Cultural, Historical, Legal, and Philosophical Issues. Vol. 1. – Cheltenham, UK: Edward Elgar, 2001. P. 4. [19]
17. Williamson C. R. Contructing Institutions. Mississippi State University, December 18, 2012 . [18]
18. URL : http://papers.ssrn.com/sol3/papers.cfm">abstract_id=219129S.P.4.
19. https://rb.ru/news/vybory-blokchejn/ [27]
20. https://www.cnbc.com/2016/10/03/richard-branson-blockchain-could-create-economic-revolution-in-emerging-markets.html [24]
21. https://www.forbes.ru/milliardery/364731-bezumcy-v-afrike-zachem-richardu-brensonu-konferenciya-po-blokcheynu-v-marrakeshe [25]
22. http://portal.tpu.ru:7777/SHARED/h/HUBUS/metodichka/tutorial/econ.pdf [15]
23. https://freedomhouse.org/ [2,5]
24. http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf [6]
25. https://www.weforum.org/ [3,7]
26. https://www.heritage.org/ [1,4]
27. https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BF%D0%B8%D1%81%D0%BE%D0%BA_%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D0%BD_%D0%BF%D0%BE_%D0%92%D0%92%D0%9F_(%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D0%BD%D0%B0%D0%BB) [8]

Сдана/Հանձնվել է՝ 03.04.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 06.04.2020
Принята/Ընդունվել է՝ 10.04.2020